## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Հնումը Կովկասն աւելի շատ ազգաբնակութիւն է ունեցել ներկայումս եղածից: Անդրկովկասի որոշ մասեր, որոնք այժմ անմարդաբնակ, անապատ են, մի ժամանակ ծաղկած վիճակում էին: Ստրաբոնը յիշատակում է, որ Մուղանի ու Միլի անապատները ծաղկած վայրեր էին, այնտեղ կենը յոյանի քաղաքներ կային: Երևանի նահանգի այն վայրերը, որոնք ներկայումս ամայի, անմշակ են, մի ժամանակ չէին, մարդաշատ էին: Ընդունում են, որ Կովկասն իր հնագոյն, խաղաղ ժամանակներում մօտ 16 միլիոն ազգաբնակութիւն է ունեցել (Է. Ռեկլիւ) այսինքն՝ ներկայից աւելի շատ: Ազգաբնակութեան այս նուազումը բացատրւում է երկրի անհանգիստ դրութեամբ: Անընդհատ պատերազմները, արշաւանքները, հսկայական գաղթերը զրկել են երկիրը իր ազգաբնակութեան մի խոշոր մասից:

Ներկայումս Կովկասը չունի իր մեծութեան համեմատ ազգաբնակութիւն. ազգաբնակութիւնն այստեղ շատ նօսր է: Կովկասի մօտ 362103, 49 քառակուսի վերստ տարածութեան վրայ ապրում է ընդամենը 11334080 հոգի, այսինքն մի քառակուսի վերստի վրայ 31, 2 [1]):

Մինչդեռ այդ տարածութիւնը կարող է աւելի շատ ազգաբնակութիւն ընդգրկել իր մէջ: Ըստ Էլ. Ռեկլիւի Անդրկովկասը գտնուելով բարեխառն գօտում, ճոխ, բազմազան բուսականութիւն ունենալով, պաշտպանուած լինելով ցուրտ հիւսիսաբեւեռեան քամուց, ապահովուած առատ անձրևներով, կարող է բաւական մեծ ազգաբնակութիւն կերակրել: Եթէ Կովկասի ջրանցքները վերանորոգուեն, նորերը կառուցանուեն, նրա ազգաբնակութիւնը կարող է կրկնապատկուել: Կովկասի լաւ ոռոգուած դաշտերը կարող են Ֆրանսիացիների չափ ժողովուրդի կերակրել [2]):

Կովկասի ազգաբնակութեան վերաբերեալ բաւական տեղեկութիւններ են ժողովուել տարիների ընթացքում, որոնց մշակումը հետաքրքիր արդիւնքներ տալ կարող է: Ներկայ յօդուածում ես փորձում եմ՝ հիմնուած եղած վիճակագրական

---

1) Кавказскій Календарь на 1913 г

2) Э. Реклю. Азія. եր. 59.

տեղեկութիւնների վրայ, մի քանի դիտողութիւններ անել Անդրկովկասի ազգաբնակութեան շարժումների, փոփոխութիւնների վրայ:

Կովկասեան ազգաբնակութեան վիճակագրութիւնը, չնայած որ քառասնական թուականներից է սկսւում, շատ անկանոն, պակասաւոր է: Միւս կողմից երկրում այնպիսի դէպքեր են տեղի ունեցել (նոր երկրների նուաճում, ներգաղթ, արտագաղթ, պատերազմներ և այլն), որ հնարաւոր չէ ազգաբնակութեան աստիճանական աճեցման, կամ փոփոխութեան հետևել սկսած քառասնական թուականներից: Եթէ մեծ աշխատանք գործադրուի գուցէ հնարաւոր լինի մի մօտաւոր գաղափար տալ այդ մասին: Իմ յօդուածի նպատակից այդ, ի հարկէ, դուրս է:

Ընդհանուր առմամբ պէտք է ասել, որ Կովկասեան վիճակագրութիւնը դեռ շատ պակասութիւններ ունի, գիտութեան պահանջներին չէ համապատասխանում, ազատ չէ սխալներից: Այնպէս որ չափազանց զգուշութիւն է պահանջւում: Ինչ որ տրւում է, պէտք է մօտաւորապէս ընդունել:

Անդրկովկասի ազգաբնակութեան աճեցման, կամ փոփոխութիւններին ես պէտք է հետևեմ սկսած 1886 թուականից: Բայց հետաքրքիր է և աւելորդ չի լինի իմանալ, թէ դրանից առաջ որքան էր Անդրկովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւը, ինչքան այդ հնարաւոր է: Վիճակագրական տեղեկութիւնները մինչև 1886 թ. բաւական խառն, անկանոն են: Դրա համար ես հեռուն գնալ չեմ կարող: Ամենից յարմար եմ գտնում վերցնել 1865 թ. տեղեկութիւններն Անդրկովկասի ազգաբնակութեան մասին:

| Անդրկովկասի | ազգաբնակութիւնը | տարածութիւնը | 1 քառ. վ. վրայ ապր. 1865 թ. [1] |
|---|---|---|---|
| Դաղստանի շրջան | 475801 | 23724, 0 | 20, 0 |
| Թիֆլիզի նահանգ | 598526 | 42881, 0 | 14, 0 |
| Բագուի » | 848642 | 57749, 4 | 14, 7 |
| Երևանի » | 437719 | 25607, 6 | 17, 1 |
| Քութայիսի » | 427079 | 16134, 1 | 26, 5 |
| Մինգրելիա | 194614 | 8108, 3 | 24, 0 |
| Սուխումի շրջան | 79195 | 6941, 7 | 11, 4 |
| Ընդամենն Անդրկովկաս. | 3061576 | 181146, 1 | 16, 6 |

Այս թուերը, ի հարկէ, բոլորովին ճիշտ չեն, և դժուար է

1) Кавказскій Календарь на 1867 г.

*որանց վրայ հիմնուած եզրակացութիւններ հանել։ Այս տրւում է մի մօտաւոր գաղափար կազմելու այն ժամանակուայ ազգաբնակութեան մասին։*

*Կովկասի ազգաբնակութեան վերաբերեալ քիչ թէ շատ կանոնաւոր տեղեկութիւնները սկսւում են* 1886-*ի մարդահամարից։ Այս թուականից էլ կը հետևեմ ազգաբնակութեան շարժման։ Այստեղ հնարաւոր չէ և կարիք էլ չկայ ազգաբնակութեան շարժման տարիներով հետևել, այլ ես կը վերցնեմ երկար ժամանակամիջոցով—տասնամեակներով—որքան այդ ինձ թոյլ կըտան վիճակագրական տեղեկութիւնները։ Ի հարկէ, ինչքան մեր օրերին մօտենանք, այնքան տեղեկութիւնները շատանում, բազմակողմանի և լրիւ են դառնում։*

*Ըստ* 1886 *թ. վիճակագրութեան Անդրկովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւն էր* 4881343, *որը նահանգների վրայ բաժանուած էր հետևեալ կերպ։*

*Անդրկովկաս*

*նահանգներ*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Թիֆլիզի* | 808143 | *Գանձակի* | 728943 | *Դաղստանի շրջ.* | 592780 |
| *Քութայիսի* | 923306 | *Երևանի* | 670405 | *Կարսի շրջ.* | 174044 |
| *Բագուի* | 712703 | *Սևծովեան* | 18125 | *Սուխումի շրջ.* | 74449 |

*Սեռերի յարաբերութիւնը հետևեալն էր.*

*Ամբողջ Անդրկովկասում տղամարդկանց թիւն էր* 2642875, *իսկ կանանցը* 2238468։ *Այսինքն տղամարդիկ կազմում են մօտաւորապէս* 54%, *իսկ կանայք* 46%։

*Ըստ նահանգների սեռերի յարաբերութիւնն էր.*

| | *Ազգաբնակութիւն* | |
|---|---|---|
| *Նահանգ* | *արական* | *իգական* |
| *Թիֆլիզի* | 440735 | 367408 |
| *Քութայիսի* | 329681 | 350236 |
| *Սուխումի շրջ.* | 36924 | 31849 |
| *Բաթումի* | 491811 | 433680 |
| *Գանձակի* | 410640 | 321483 |
| *Բագուի* | 401257 | 311446 |
| *Երևան* | 361627 | 308788 |
| *Դաղստանի շրջ.* | 322787 | 299481 |
| *Կարսի շրջան* | 139377 | 128954 |
| *Զաքաթալի շրջան* | 39948 | 34501 |
| *Անդրկովկասում* | 2642875. 54% | 2238468. 46% |

*Ըստ ազգաբնակութեան խտութեան Անդրկովկասում մի քառակուսի վերստի վրայ ապրում էր* 21,8 *հոգի։ Նահանգներում խտութիւնը հետևեալն էր.*

| | |
|---|---|
| Թիֆլիզի | 23. 2 հոգի |
| Քութայիսի | 40, 2 » |
| Սուխումի շրջ. | 29, 1 » |
| Գանձակի | 19, 2 » |
| Բագուի | 20, 7 » |
| Երեւանի | 29. 0 » |
| Կարսի շրջ. | 10, 4 » |
| Դաղստանի շրջան | 22, 9 » |
| Սեւծովեան | 21, 2 » |
| Անդրկովկաս | 21, 8 հոգի: |

Ըստ կրօնի ուղղափառների թիւն էր (ռուսներ, վրացիներ և այլք) Անդրկովկասում 1090831, Լուսաւորչականների 712079, շիաների 670168, սիւննիների 1127392: (Այս տեղեկութիւնները հանուած են հոգեւոր վարչութիւնների հաշուետուութիւններից [1]):

Մօտաւորապէս տասը տարուայ ընթացքում (1886—1897) Անդրկովկասի ազգաբնակութիւնը ըստ 1897 թուի մարդահամարի հետեւեալ փոփոխութիւններն է ցոյց տալիս:

Անդրկովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 5516139, որը նահանգների վրայ հետեւեալ կերպ է բաժանուած:

Անդրկովկաս
նահանգներ

| | | | |
|---|---|---|---|
| Թիֆլիզի | 958775 | Սեւծովեան | 54228 |
| Քութայիսի | 1075861 | Դաղեստանի | 586636 |
| Բագուի | 789659 | Կարսի | 292498 |
| Գանձակի | 871557 | Զաքաթալի | 82168 |
| Երեւանի | 804757 | | |
| | | Անդրկովկաս | 5516139 |

Սեռերի յարաբերութիւնը հետեւեալն է. տղամարդկանց թիւն է 2979702, իսկ կանանցը 2536437. այսինքն տղամարդիկ կազմում են մօտաւորապէս 54, 10%, իսկ կանայք 45, 90%:

Ըստ նահանգների սեռերի յարաբերութիւնը.

| Նահանգ | ազգաբնակութիւն | |
|---|---|---|
| | արական | իգական |
| Թիֆլիզի | 526349 | 432426 |
| Քութայիսի | 433750 | 397397 |
| Սուխումի շրջ. | 55165 | 45333 |
| Բաթումի | 567393 | 508468 |

1) Кавказскій Календарь на 1889 г. (վիճակագրութիւնը 1884 թուականից է):

| | | |
|---|---|---|
| Գանձակի | 479433 | 392124 |
| Բագուի | 437779 | 351880 |
| Երևանի | 429689 | 375068 |
| Դաղստանի շրջ. | 300155 | 286481 |
| Կարսի շրջան | 162723 | 129775 |
| Զաքաթալի շրջ. | 44421 | 37747 |
| Անդրկովկասում | 2979702. 54,10% | 2536437. 45,90% |

Ծնունդների և մահուան յարաբերութեան մասին որոշ գաղափար է տալիս հետևեալ վիճակագրական տախտակը.

| Նահանգ | 1898 թ. ծնուել են | | | 1898 թ. մեռել են | | | աւելացել են | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ար. | իգ. | երկու սեռի | ար. | իգ. | երկու սեռի | ար. | իգ. | երկու սեռի |
| Թիֆլիսի | 18958 | 16196 | 35154 | 12062 | 10036 | 22098 | 6896 | 6160 | 13056 |
| Բագուի | 10984 | 9123 | 20107 | 8027 | 6422 | 14449 | 2957 | 2701 | 5658 |
| Քութայիսի | 16190 | 14751 | 30941 | 9484 | 8781 | 18265 | 6706 | 5970 | 12676 |
| Գանձակի | 12148 | 8917 | 21065 | 7827 | 5857 | 13784 | 4321 | 2960 | 7281 |
| Երևանի | 17147 | 15158 | 32305 | 10004 | 8841 | 18845 | 7143 | 6317 | 13460 |
| Դաղստանի | 7779 | 6793 | 14572 | 7191 | 5465 | 12656 | 588 | 1328 | 1916 |
| Կարսի | 4760 | 4046 | 8806 | 2279 | 1956 | 4235 | 2481 | 2090 | 4571 |
| Ընդամենը*) | 87966 | 74984 | 162950 | 56874 | 47458 | 104332 | 31092 | 27526 | 58618 |

Այսպէս ծնուողների թիւն է 162950, իսկ մեռնողներինը 104332. ուրեմն ծնուողներն աւել են 58618-ով։ Ծնուողների և մեռնողների սեռերի յարաբերութիւնը համարեա թէ նոյն է, ինչ որ տղամարդկանց և կանանց ընդհանուր յարաբերութիւնը։ Շատ տղամարդիկ են ծնւում, շատ էլ մեռնում, իսկ կանայք համեմատօրէն քիչ են ծնւում և քիչ մեռնում։ Արական սեռին պատկանող մեռնողները կազմում են 54.5%, իսկ իգականը՝ 45,5%. տղամարդկանց ծնունդները կազմում են 54%, իսկ կանանցը՝ 46%։

Տասը տարուայ ընթացքում Անդրկովկասի ազգաբնակութիւնն աւելացել է 813241-ով։ Մի քառակուսի վերստի վրայ 1897 թ. ապրում էին 26 հոգի։ Ըստ նահանգների ազգաբնակութեան խտութիւնը հետևեալն է ցոյց տալիս.

| Նահանգ | 1 ք. վ. վրայ ապրում են 1897 թ. |
|---|---|
| Թիֆլիսի | 23, 2 |
| Քութայիսի | 33. 5 |
| Բագուի | 22, 9 |

*) Առանց Սուխումեան նահանգի եւ Զաքաթալի շրջանի.

| | |
|---|---|
| Գանձակի | 22, 4 |
| Երեւանի | 34, 6 |
| Սեւ ծովի | 8, 4 |
| Դաղստանի | 22, 4 |
| Կարսի | 17, 9 |
| Զաքաթալի | 21, 8 |
| Անդրկովկասում | 26, 0 |

Այժմ հետաքրքիր է իմանալ Անդրկովկասում ապրող բազմացեղ, բազմալեզու ազգերի թիւն ու թուական յարաբերութիւնը: Բայց կարիք չկայ բոլոր ազգերը թուելու, մի կողմ թողնելով մանր, երկրորդական ազգերը, տեսնենք թուական ինչ յարաբերութիւն կայ երկրի չորս գլխաւոր ազգերի—հայերի, վրացիների, թուրքերի և ռուսների մէջ։

Ըստ 1898 թ. վիճակագրութեան Անդրկովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 5516139, որից հայեր 939131, վրացիներ 1191999 [1]), ռուսներ 122257, թուրքեր 1209885, իսկ մնացածը կազմում են միւս ազգութիւնները:

Ըստ նահանգների այդ չորս գլխաւոր ազգերը հետեւեալ կերպ են բնակուած.

| Նահանգ | ռուսներ | վրացիներ | հայեր | թուրքեր |
|---|---|---|---|---|
| Թիֆլիզի | 35750 | 396673 | 193610 | 68376 |
| Քութայիսի | 4907 | 791383 | 16399 | 28364 |
| Երեւանի | 4152 | 33 | 375700 | 258057 |
| Գանձակի | 8089 | 186 | 258324 | 407957 |
| Բագուի | 42432 | 11 | 55459 | 377521 |
| Դաղստանի | 5421 | 94 | 1054 | 17697 |
| Կարսի | 10695 | 9 | 37094 | 41823 |
| Սեւ ծովի | 10654 | 123 | 970 | — |
| Զաքաթալի | 177 | 3703 | 521 | 21090 |
| Ընդամենը | 122257 | 1191999 | 939131 | 1209885 |

Այս թուերը բոլորովին ճիշտ չեն, այլ մօտաւոր գաղափար են տալիս ազգերի թուական յարաբերութեան մասին: Հիմնուած այդ թուերի վրայ՝ ռուսները ազգաբնակութեան 0, 22% են կազմում, վրացիները 21%, հայերը 17% իսկ թուրքերը 21, 90%: Մնացած 39, 98% կազմում են միւս ազգութիւնները:

Վերջին վիճակագրական տեղեկութիւններն Անդրկովկասի ազգաբնակութեան մասին 1912 թուականից է: Այս տեղե-

1) Վրացիների մէջ հաշուած են եւ ազգակից մահմեդականները:

կութիւնները ժողովուած են վարչութեան (ադմինիստրացիայի) ձեռքով։ 1897 թ.-1912 թ. կարելի էր երկու շրջանի բաժանել (1897-1907 և 1907-1912), բայց ես յարմար եմ համարում փոխանակ տասնամեակի տասն և հնգամեակ վերցնել։

Ըստ 1912 թ. վիճակագրութեան Անդրկովկասի ազգաբնակութեան ընդհանուր թիւն է 7323025. այդ նահանգների վրայ հետևեալ կերպ է բաժանուած։

| Նահանգ | ազգաբնակութեան թիւը. |
|---|---|
| Բաքուի | 796811 |
| Բաքուի քաղաքապետութ. | 378173 |
| Բաթումի շրջան | 161239 |
| Դաղստանի » | 684580 |
| Գանձակի նահանգ | 1125152 |
| Կարսի շրջան | 371903 |
| Զաքաթալի շրջան | 81103 |
| Քութայիսի | 988917 |
| Սուխումի | 167735 |
| Թիֆլիսի | 1338216 |
| Սև ծովի | 166960 |
| Երևանի | 1062596 |
| Անդրկովկասում | 7323025 |

Սեռերի յարաբերութիւնը հետևեալն է։ Տղամարդկանց թիւն է ամբողջ Անդրկովկասում 3920253, իսկ կանանց՝ 3402777։ Տղամարդիկ կազմում են ազգաբնակութեան 53, 55 %, իսկ կանայք՝ 46, 45 %։

Սեռերի յարաբերութիւնն ըստ նահանգների

| Նահանգ | արական | | իգական | |
|---|---|---|---|---|
| Բաքուի | 427656 | | 369155 | |
| Բաքուի քաղաքապետ. | 220714 | | 157459 | |
| Բաթումի | 87261 | | 73978 | |
| Դաղստանի | 354086 | | 330494 | |
| Գանձակի | 595574 | | 529578 | |
| Զաքաթալի | 44172 | | 36931 | |
| Կարսի | 191842 | | 180061 | |
| Քութայիսի | 528455 | | 460462 | |
| Սուխումի | 98667 | | 68708 | |
| Թիֆլիսի | 709676 | | 628540 | |
| Սև ծովեան | 100454 | | 66506 | |
| Երևանի | 561696 | | 500900 | |
| Անդրկովկասում | 3920253 | 53, 55% | 3402772 | 46, 45% |

Անդրկովկասի քաղաքների ազգաբնակութեան մէջ սեռերի յարաբերութիւնը մի քիչ փոխուած է։ Տղամարդիկ քաղաքներում կազմում են 55, 55°|₀ իսկ կանայք 44, 45°|₀։

Հետաքրքիր է իմանալ քաղաքներում ապրող ազգաբնակութեան թիւը, նրա յարաբերութիւնը ընդհանուր ազգաբնակութեան թւի համեմատութեամբ և այլն։

Քաղաքների ազգաբնակութիւնը

| Նահանգի | քաղաք. ազգաբնակութիւնը | | |
|---|---|---|---|
| | արական | իգական | միասին |
| Բագուի նահ. | 42238 | 39863 | 80201 |
| Բագուի քաղ. | 141698 | 108113 | 249809 |
| Բաթումի | 15009 | 9460 | 24559 |
| Դաղստանի | 40746 | 23604 | 64350 |
| Գանձակի | 71907 | 63389 | 135296 |
| Զաքաթալի | 2676 | 1287 | 4963 |
| Կարսի | 35486 | 13763 | 49249 |
| Քութայիսի | 47365 | 32532 | 79897 |
| Սուխումի | 33795 | 14572 | 48368 |
| Թիֆլիսի | 205703 | 193375 | 399078 |
| Սև ծովեան | 59764 | 38626 | 98390 |
| Երևանի | 57766 | 48129 | 105895 |
| Անդրկովկ. քաղաքներում | 734241 (55, 55°|₀) | 587713 (44, 45°|₀) | 1321954 |

Այսպէս Անդրկովկասի բոլոր քաղաքներում ապրում են ընդամենը 1321954 հոգի։ Համեմատած ամբողջ ազգաբնակութեան թւի հետ քաղաքների ազգաբնակութիւնը կազմում է 18°|₀։

Ծնունդների, մեռնողների և ամուսնացողների մասին հետևեալ տեղեկութիւնները կան 1911 թ. (վարչութեան տուած)։

| | Ծնունդների թիւը | | | Մեռնողների թիւը | | | | ամուսնացողների |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նահանգ | արակ. | իգակ. | միասին | արակ. | իգակ. | միասին | | թիւը |
| Բագուի | 9802 | 8302 | 18104 | 6699 | 5873 | 12572 | + 5532 | 6374 |
| Բագ. քղք. | 5073 | 4860 | 9930 | 2585 | 2265 | 4850 | » 5081 | 1083 |
| Դաղստան | 8800 | 76400 | 16440 | 5690 | 4827 | 10517 | » 5923 | 7219 |
| Գանձակ | 12386 | 10203 | 22589 | 7475 | 6146 | 13621 | » 8968 | 7294 |
| Բաթում | 2159 | 2002 | 4161 | 1530 | 1251 | 2781 | » 1380 | 1366 |
| Զաքաթ. | 1183 | 957 | 2140 | 881 | 673 | 1554 | » 586 | 1077 |
| Կարս | 7250 | 631 | 13781 | 3524 | 3031 | 6555 | » 7226 | 2929 |
| Քութայիս | 13392 | 12432 | 25824 | 7175 | 6536 | 13711 | » 12112 | 8293 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սուխումի | 2187 | 1897 | 4084 | 1128 | 746 | 1874 | » 2210 | 1297 |
| Թիֆլիզի | 19930 | 17216 | 37146 | 11861 | 10159 | 22020 | » 15126 | 10283 |
| Սև ծով. | 2651 | 2368 | 5019 | 1608 | 1001 | 2609 | » 2410 | 1340 |
| Երևանի | 17562 | 15386 | 3294 | 9448 | 8459 | 17907 | » 15014 | 7971 |
| Անդրկով-կասում | 102373 | 89794 | 192167 | 59604 | 50967 | 110576 | +81596 | 53597 |

Այսպէս Անդրկովկասում ծնունդների թիւն է 192167, որից արու 102373 (53, 27%) և էգ 89794 (46, 73%). իսկ մեռնողների թիւն է 110576, որից արու 59604 (54%) և էգ 50967 (46%)։ Տարեկան աճեցումն է 81596։

| Նահանգ. | տարածութ. | ազգաբն. թիւը | և խտութ. | 1 քառ. |
|---|---|---|---|---|
| Բաք. նահ. | 33345, 25 ք. վ. | 796811 | 23, 9 | վերստի վրա |
| Բաք. քղքպ. | 931, 20 | 378173 | 406, 2 | » |
| Դաղստանի | 26105, 43 | 684580 | 26, 2 | » |
| Բաթումի | 6129, 14 | 161239 | 26, 3 | » |
| Գանձակի | 38922, 22 | 1125152 | 28, 9 | » |
| Կարսի | 3502, 24 | 371963 | 22, 6 | » |
| Զաքաթալի | 16466, 15 | 81603 | 23, 2 | » |
| Քութայիսի | 18535, 12 | 988917 | 53, 3 | » |
| Սուխումի | 5791, 79 | 167725 | 28, 9 | » |
| Թիֆլիզի | 35904, 04 | 1338216 | 37, 8 | » |
| Սևծովեան | 7328, 31 | 166960 | 22, 8 | » |
| Երևանի | 23194, 78 | 1062596 | 45, 8 | » |
| Անդրկովկ. | 216053, 33 ք. վ. | 7323025 | 33, 8 հոգի | |

Այսպէս Անդրկովկասում ամենից խիտ ազգաբնակութիւն ունի Բագուի քաղաքապետութիւնը, որ մի քառ. վերստի վրայ ապրում են 406, 2 հոգի. իսկ ամենից նօսր բնակութիւն ունի Կարսի շրջանը, ուր մի քառ. վերստի վրայ ապրում են 22, 6 հոգի։ Բագուի քաղաքապետութիւնից յետոյ ազգաբնակութեան խտութեամբ երկրորդ տեղն է բռնում Քութայիսի նահանգը (53, 3 հոգի մի քառ. վերս.) իսկ երրորդ տեղը Երևանի նահանգը (45, 8 հոգի մի քառ. վերս. վրայ)։ Տարածութեամբ ամենամեծ նահանգն է Գանձակինը (38922, 22 ք. վերս.), երկրորդը Թիֆլիզինը (35904, 04 ք. վ.)։ Անդրկովկասի ազգաբնակութեան խտութիւնը (33, 8 մի քառ. վերս. վրայ) պէտք է շատ քիչ համարել։ Այդ ապացոյց է երկրի յետամնացութեան։

Այժմ հետաքրքիր է իմանալ, թէ Անդրկովկասում ինչ ազգեր են ապրում, որքան է իւրաքանչիւրի թիւը, և երկրի չորս գլխաւոր ազգերի մէջ թուական ինչ յարաբերութիւն կայ։

| Ազգեր | արական | իգական | միասին | Որ °/₀ ազգաբն. |
|---|---|---|---|---|
| 1. Ռուսներ | 308516 | 243645 | 552161 | 0, 75 |
| 2. Եւրոպ. այլազ. | 49529 | 38372 | 87901 | — |
| 3. Քարթվելցիներ | 868964 | 766569 | 1635533 | 22, 33 |
| 4. Հայեր | 870913 | 765573 | 1636486 | 22, 33 |
| 5. Կովկ. լեռն. | 407128 | 378996 | 786124 | — |
| 6. Քրդեր | 66282 | 58498 | 124780 | — |
| 7. Թուրք. տաճ. | 1220777 | 1036988 | 2257765 | 32 °/₀ |
| 8. Ցիգաններ | 744 | 573 | 1317 | — |
| 9. Հրէաներ | 41390 | 33869 | 77259 | — |
| 10. Ասիակ. այլ ազգ. | 85810 | 78689 | 164499 | — |
| Ընդամենն Անդրկովկասում | 3920253 | 3402772 | 7323025 | |

Այսպէս թւական առաւելութեամբ առաջին տեղը բռնում են թուրքերը—տաճիկները (32°/₀), հայերը և վրացիները համարեա թէ հաւասար են (22, 33°/₀), իսկ ռուսները այդ չորս ազգերի մէջ վերջին տեղն են բռնում (0, 75)։ Այս չորս ազգերն Անդրկովկասում կազմում են ազգաբնակութեան 77,41°/₀. մնացածը կազմում են միւս ազգերը։

Ըստ նահանգների այդ չորս ազգերը հետևեալ կերպ են բնակուած.

| Նահանգ | Ռուսներ | Քարթվելցին. | Հայեր | Թուրք.-տաճիկ. |
|---|---|---|---|---|
| Բագուի | 64287 | 755 | 42280 | 609268 |
| Բագ. քաղ. | 103597 | 2662 | 73441 | 162983 |
| Բաթումի | 10169 | 87729 | 17313 | 40606 |
| Դաղստանի | 30802 | 371 | 4392 | 76980 |
| Գանձակի | 34312 | 1085 | 378785 | 682885 |
| Զաքաթալի | 792 | 5226 | 3302 | 20014 |
| Կարսի | 18321 | 1603 | 108180 | 132137 |
| Քութայիսի | 16177 | 948663 | 5438 | 1093 |
| Սուխումի | 25399 | 27088 | 10167 | 11379 |
| Թիֆլիսի | 118262 | 551827 | 382365 | 132915 |
| Սև ծովեան | 114081 | 6611 | 13976 | 5467 |
| Երևանի | 15934 | 1264 | 596254 | 382208 |
| Ընդամենը | 552161 | 1635533 | 1636486 | 2357765 |

Այս տախտակից երևում է, որ ռուսները ցրուած են ամեն կողմերում։ Վրացիները մեծամասնութիւնն են կազմում Թիֆլիսի ու Քութայիսի նահանգներում։ Հայերի ու թուրքերի թւական յարաբերութիւնը բաւական հետաքրքիր է։ Բագուի նահանգում թուրքերը մեծամասնութիւն են կազ-

մում. իսկ Գանձակի և Երևանի նահանգներում խառն են հայերի հետ։ Այժմ հետաքրքիր է այդ երկուսի թուական յարաբերութիւնը որոշել։ Ընդհանուր կերպով վերցրած Գանձակի նահանգում թուրքերը կազմում են 60, 69%, իսկ հայերը 56, 11%։ Երևանի նահանգում թուրքերը կազմում են 35,97%, իսկ հայերը 56,11%։ Բայց այս թուերը բաւարար չեն, արժէ այդ երկու ազգերի թուական յարաբերութիւնը ըստ գաւառների որոշել, որը և շատ բան կարող է տալ։

Հայերի և մահմեդականների թուական յարաբերութիւնը Գանձակի և Երևանի նահանգներում ըստ 1912 թ. տուեալների։

| Նահանգ | հայեր | շիաներ | սիւննիներ | ընդհանուր ազգաբնակ. |
|---|---|---|---|---|
| Գանձակի | 378785 | 426341 | 256544 | 1125152 |
| 1. Արէշի գաւառ. | 15275 | 9622 | 52012 | 78682 |
| 2. Ջւանշիրի » | 24147 | 52276 | 10365 | 87453 |
| 3. Գանձակի » | 49417 | 91897 | 48482 | 213302 |
| 4. Զանգեզ. » | 85788 | 108506 | 23033 | 219313 |
| 5. Ղազախի » | 57781 | 44688 | 20406 | 129798 |
| 6. Կարեագ. » | 19488 | 42333 | 14823 | 78380 |
| 7. Նուխու » | 34700 | 5644 | 83084 | 144214 |
| 8. Շուշու » | 92192 | 71375 | 4449 | 174000 |

Գանձակի նահանգում միայն Շուշու գաւառում հայերը մեծամասնութիւն են կազմում։ Միւս եօթը գաւառներում գերակշռում են մահմեդականները։ Սիւննիները գերակշռում են Արէշի և Նուխու գաւառներում, իսկ մնացածներում, և ընդհանրապէս այս նահանգում գերակշռութիւնը պատկանում է շիաներին։

| Նահանգ | հայեր | շիաներ | սիւննիներ | ընդհանուր ազգաբնակ. |
|---|---|---|---|---|
| Երևանի | 596254 | 376556 | 5647 | 1062596 |
| 1. Ալէքսան. գաւառ. | 193104 | 8042 | 56 | 217910 |
| 2. Նախիջև. » | 52460 | 74140 | 16 | 128489 |
| 3. Նոր Բայազ. » | 113476 | 40744 | 3936 | 166210 |
| 4 Սուրմալուի » | 30718 | 42595 | 453 | 98892 |
| 5. Շարուր Դար. » | 26615 | 60167 | 754 | 90701 |
| 6. Երևանի » | 78447 | 102569 | 402 | 199577 |
| 7. Էջմիածնի » | 101084 | 48299 | 30 | 160817 |

Երևանի նահանգում հայերը մեծամասնութիւն են կազմ. Ալէքսանդրապոլի, Նոր-Բայազէտի և Էջմիածնի գաւառներում։ Միւս չորս գաւառներում գերակշռում են մահմեդականները։

Այս նահանգում սուննիները շատ քիչ տոկոս են կազմում. մեծամասնութիւնը շիաներ են: Առհասարակ Անդրկովկասում շիաները շատ են սուննիներից (շիաներ 1367369, սուննիներ 890596): Հետաքրքիր է հայերի և թուրքերի թուական համեմատութիւնը ըստ գիւղերի, գիւղական համայնքների վերցնել: Բայց դեռ հարկաւոր նիւթերը պակասում են: Թէև 1909 թ. այդ. անտակ մի վիճակագրութիւն կայ: 1)

| Նահանգ. | գիւղերի թիւ. | ազգաբն. | ազգեր: թուրք. | | հայ. | այլազ. |
|---|---|---|---|---|---|---|
| Գանձակի (1909) | 1676 | 898856 | 503522 | *87598 | 275281 | 32465 |
| I. Արէշի գաւառ | 131 | 67820 | 54035 | | 13785 | |
| 1. Ոստիկան. մաս | 50 | 31742 | » | — | | — |
| 2. » » | 49 | 26150 | 21092 | | 5418 | |
| 3. » » | 32 | 9568 | 1201 | | 8367 | |
| II Ջաւանշ. գաւառ | 305 | 87748 | 65198 | | 22263 | 287 ռուս. |
| 1. Ոստիկան. մաս | 73 | 35529 | 30489 | | 5040 | |
| 2. » » | 135 | 19391 | 18027 | | 1364 | |
| 3. » » | 97 | 32828 | 16682 | | 15869 | 287 ռուս. |
| III Գանձակի գաւ. | 230 | 131592 | 89261 | 1800 | 23660 | 16871 |
| 1. Ոստիկան. մաս | 61 | 21922 | 21165 | | — | 757 գերմ. |
| | | | | | | 2234 » |
| 2. » » | 64 | 34252 | 16880 | | 11508 | 3630 ռուս. |
| 3. » » | 37 | 20151 | 14508 | | 5081 | 562 » |
| 4. » » | 19 | 30702 | 28127 | | — | 2575 գերմ. |
| 5. » » | 39 | 19827 | 3843 | 1800 | 7071 | 7113 ռուս. |
| 6. » » | 10 | 4738 | » | » | » | » |
| IV Ղազախի գաւ. | 145 | 121350 | 57558 | 9057 | 49815 | 4396 |
| 1. Ոստիկան. մաս | 43 | 23255 | 22079 | | 652 | 524 գերմ. |
| 2. » » | 27 | 31886 | 17679 | | 14207 | — |
| 3. » » | 38 | 38214 | 3552 | 4371 | 25895 | 4396 |
| 4. » » | 37 | 27995 | 14248 | 4686 | 9061 | |
| V. Նուխու գաւ. | 143 | 96524 | 42131 | 39185 | 13622 | 1586 |
| 1. Ոստիկան. մաս | 33 | 23556 | 11713 | 5959 | 5884 | — |
| 2. » » | 35 | 17802 | 7687 | 10115 | — | — |
| 3. » » | 38 | 26702 | 12081 | 5907 | 7738 | 1586 հրէն. |
| 4. » » | 37 | 28464 | 10650 | 17814 | — | 5393 |
| VI Զանգեզ. գաւ. | 317 | 187851 | 86847 | 34626 | 60985 | |

1) Кавказскій календарь на 1910 г.

*) Թուրքերի և հայերի միջև դրածը նշանակում է հայեր և թուրքեր խառն են:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ոստիկան. մաս | 55 | 32647 | 11895 | | 19712 | 1040 ռ. ս. |
| 2. » » | 54 | 67285 | 27565 | 7490 | 32230 | — |
| 3. » » | 92 | 34078 | 25775 | 7471 | 832 | — |
| 4. » » | 64 | 33505 | 17394 | 9258 | 6853 | — |
| 5. » » | 33 | 14760 | 10704 | — | | 4353 թ. ռ. |
| 6. » » | 19 | 5576 | 4218 | | 1358 | |
| VII Կարեագ. գաւ. | 173 | 70074 | 50035 | 2390 | 15720 | 1389 |
| 1. Ոստիկան. մաս | 42 | 15122 | 10793 | 2390 | — | 1389 |
| 2. » » | 60 | 30884 | 20811 | — | 10073 | — |
| 3. » » | 71 | 24078 | 18431 | | 5647 | |
| VIII Շուշու գաւ. | 245 | 135907 | 58457 | | 75431 | 2019 |
| 1. Ոստիկան. մաս | 57 | 40886 | 5045 | | 35372 | 469 ռուս. |
| 2. » » | 60 | 48326 | 6717 | | 40059 | 1550 » |
| 3. » » | 84 | 23511 | Թուրքեր | | — | — |
| 4. « « | 44 | 23184 | » | | — | — |
| Երեւանի նահանգ | 1288 | 823815 | 309528 | | 463834 | 46347 |
| I. Երեւանի գաւ. | 213 | 55933 | 65954 | | 46964 | 9568 |
| 1. Ոստիկան. մաս | 43 | 26573 | 21326 | | 5247 | — |
| 2. » » | 56 | 23171 | 9520 | | 13120 | 531 |
| 3. » » | 51 | 29091 | 7150 | | 20239 | 1702 |
| 4. » » | 63 | 41651 | 27958 | | 8358 | 5335 |
| II Էջմիածնի գաւ. | 218 | 130982 | 36173 | | 87913 | 6894 |
| 1. Ոստիկան. մաս | 32 | 78672 | 7557 | | 21115 | |
| 2. » » | 64 | 49332 | 10560 | | 38704 | 68 քրդ. |
| 3. » » | 44 | 32413 | 10230 | | 19805 | 2378 բ ա ս |
| 4. » » | 78 | 20565 | 7826 | | 8291 | 4447 քրդ |
| III Շարուր Դար. գ. | 163 | 80174 | 55571 | | 23241 | 1362 |
| 1. Ոստիկան. մաս | 62 | 36678 | 30582 | | 4983 | 1113 բ ա ս |
| 2. » » | 101 | 43496 | 24989 | | 18258 | 249 քրդ. |
| IV Սուրմալ. գաւ. | 227 | 91535 | 41990 | | 29734 | 19811 քրդ. |
| 1. Ոստիկան. մաս | 61 | 40305 | 14709 | | 19912 | 5684 քրդ. |
| 2. » » | 59 | 22124 | 14105 | | 2975 | 5044 » |
| 3. » » | 107 | 29106 | 13176 | | 6847 | 9083 » |
| V Նախիջեւ. գաւ. | 167 | 106981 | 60524 | | 45537 | 920 |
| 1. Ոստիկան. մաս | 31 | 25596 | 11989 | | 12972 | 635 քրդ. |
| 2. » » | 47 | 27181 | 14546 | | 12350 | 285 ռուն. |
| 3. » » | 37 | 24832 | 16764 | | 8068 | — |
| 4 » » | 52 | 29372 | 17225 | | 12147 | — |
| VI Նոր Բայազ. գ. | 135 | 140034 | 42886 | | 91428 | 5720 |
| 1. Ոստիկան. մաս | 41 | 46766 | 9311 | | 25129 | 2326 ռս. քուրդ, յոյն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. » « | 21 | 27903 | 4160 | 21294 | 2449 | ռուս. |
| 3. » » | 49 | 41484 | 26911 | 13707 | 866 | քուրդ |
| 4. » » | 24 | 33881 | 2504 | 31298 | 79 | » |
| VII Ալէքսանդր. գ. | 165 | 153623 | 6430 | 139015 | 9188 | — |
| 1. Ոստիկան. մաս | 37 | 43618 | 4947 | 36788 | 1883 | ռուս. յն |
| 2. » » | 46 | 37272 | 1483 | 30059 | 5730 | քուրդ |
| 3. » » | 44 | 32296 | — | 31731 | 565 | » |
| 4. » » | 38 | 40437 | — | հայեր | — | |

Այսպէս մասնաւորեցրած պատկերն աւելի պարզ է: Այս թուերն էլ մօտաւորապէս նոյն են ասում, ինչ որ ըստ գաւառների ցոյց է տրուած հայերի և թուրքերի թուական յարաբերութիւնը, միայն աւելի մանրամասն: Միւս կողմից իմանում ենք, որ հայ և թուրք խառն գիւղեր այնքան շատ չեն, այլ սպասածից աւելի քիչ: Երևանի նահանգում համարեա թէ չկան, իսկ Գանձակի նահանգում 1676 գիւղերից խառն հայ և թուրք բնակչութիւն ունեն 98 գիւղ, որոնց բնակչութեան թիւն է 87598:

Անդրկովկասի չորս գլխաւոր ազգերի մէջ սեռերի յարաբերութիւնը հետևեալն է:

| Ազգեր | արակ. | իգակ. | միասին | արակ. % | իգակ. % |
|---|---|---|---|---|---|
| Ռուսներ | 308516 | 243645 | 522161 | 56, 39 | 43, 61 |
| Քարթվելցիներ | 868964 | 766569 | 1635533 | 53 00 | 47, 00 |
| Հայեր | 870913 | 765573 | 1636486 | 53, 25 | 46, 80 |
| Շիաներ | 734212 | 633158 | 1367369 | 53, 78 | 46, 33 |
| Սիւննիներ | 486765 | 403831 | 890596 | 54, 10 | 45, 90 |

Ինչպէս այս համեմատութիւնից երևում է հայերի, վրացիների և թուրքերի մէջ սեռերի տոկոսների առանձին տարբերութիւն չկայ, միայն ռուսների մէջ տղամարդիկ աւելի են կանանցից 2, 76%-ով: Ծնունդների և մահերի վիճակագրութիւն ըստ ազգութիւնների, դժբախտաբար, չի պահւում: Եթէ այդ պահուի, հնարաւոր կլինի որոշել իւրաքանչիւր ազգի տարեկան ճիշտ աճեցումը, որը բաւական կարևոր է: Ընդհանրապէս պէտք է ասել, որ ծնունդների և մահերի վիճակագրութեան վրայ հարկաւոր ուշադրութիւն չեն դարձնում մեզնում:

Ըստ կրօնի Անդրկովկասի ազգերը հետևեալ կերպ են բաժանուած

1. Ուղղափառներ 2004361
   Ռուսներ 454892
   Վրացիներ 1546309

| | | | |
|---|---|---|---|
| | Հայեր | | 3160 |
| 2. | Ռուս սեկտանտներ | | 97271 |
| 3. | Հայ լուսաւորչականներ | | 1575653 |
| 4. | Մահմեդականներ | | 3172569 |
| | Շիաներ | 1367373 | |
| | Սիւննիներ | 890596 | |
| | Վրացիներ | 89224 | |
| | Քրդեր | 101270 | |
| | Լեռնականներ | 724106 | |
| 5. | Ասխական այլ քրիստոնեայ ազգեր | | 164494 |
| 6. | | | 75259 |
| 7. | Այլ դաւանանքների պատկանող | | 207293 |
| | Լեհեր և գերմանացիներ | 87901 | |
| | Հայեր | 57675 | |
| | Լեռնականներ | 61717 | |
| 8. | Եզդիներ | | 24508 |
| 9. | Ցիգաններ (?) | | 1317 |

Կրօնների առաջին տեղը բռնում է Անդրկովկասում մահմեդական կրօնը, երկրորդ տեղն՝ ուղղափառութիւնը, իսկ երրորդ տեղը լուսաւորչականութիւնը։ Բաւական աչքի է ընկնում վրացի մահմեդականների թիւը (89224) և հայ ոչ լուսաւորչականներինը (բողոքական և կաթոլիկ 56765, ուղղափառ 3160, միասին 59925)։

Այժմ այս բոլորից յետոյ կարելի է դիմել ժամանակագրական համեմատութիւնների և մօտաւոր եզրակացութիւններ հանել Անդրկովկասի ազգաբնակութեան 26 տարուայ ընթացքում կրած փոփոխութիւնների, շարժումների մասին։ Կրկնում եմ, չնայած դեռ վիճակագրութիւնը պակասաւոր է, իրաւունք չէ տալիս վերջնական եզրակացութեան յանգել, բայց մի մօտաւոր գաղափար ստանալ կարելի է։

Անդրկովկասի ազգաբնակութիւնը 26 տարուայ ընթացքում հետևեալ համեմատական աճեցումն է ցոյց տալիս։

| Նահանգ | 1886 | 1897 | + | % | 1912 | + | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թիֆլիզ | 808143 | 958775 | 150628 | 17 | 1338216 | 379441 | 39 |
| Քութայ.*) | 923306 | 1075861 | 152555 | 16 | 1317891 | 242030 | 22 |
| Բագուի*) | 712703 | 789659 | 76965 | 11 | 1174984 | 385325 | 48 |

*) 1897 Թ. Քութայիսի նահանգի մէջ են եղել այժմեան Սուխումի շրջանը եւ Բաթումի նահանգը, ինչպէս եւ Բագուի նահանգի մէջ Բագուի քաղաքապետութիւնը։ 1912 Թ. վիճակագրութեան մէջ դրանք առանձին մասեր են, բայց համեմատութեան համար նախկին ձեւով միացրել եմ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գանձակի | 728943 | 871557 | 142614 | 20 | 1125152 | 253595 | 28 |
| Երևանի | 670405 | 804757 | 134352 | 20 | 1062596 | 257839 | 32 |
| Սևծովեան | 18125 | 55228 | 36103 | 200 | 166960 | 112732 | 200 |
| Դաղստանի | 592780 | 586736 | 6114 | —1 | 684580 | 97944 | 16 |
| Կարսի | 174044 | 292498 | 118454 | 68 | 371903 | 253449 | 86 |
| Զաքաթալի | 74449 | 82168 | 7719 | 9 | 81003 | 1065 | — |
| Ընդամենը | 4881343 | 5516139 | 813241 | 15 | 7323025 | 1806886 | 32 |

Ինչպէս այս տախտակից երևում է, Անդրկովկասի ազգաբնակութիւնը 26 տարուայ ընթացքում աւելացել է 2620127 ով։ Առաջին 10 տարին աւելացման տոկոսը եղել է 15, իսկ վերջին 15 տարին 32։ 10-ը տարուայ ընթացքում աճեցումը միջին թւով տարեկան եղել է $1\frac{1}{2}$%, իսկ 15 տարուայ ընթացքում տարեկան միջին թւով 2, $\frac{2}{15}$%։ Ըստ նահանգների աճեցման մեծ տոկոս են ցոյց տալիս (Բաթումի (200 %), Կարսի (86 %) և Բաքուի (48 %) նահանգները, որ բնական աճեցում չէ, այլ աւելի շատ ներգաղթի արդիւնք։ Զաքաթալայի շրջանը փոխանակ աճեցման նուազում է ցոյց տալիս (—1065), որը դարձեալ պէտք է վերագրել արտագաղթի։

Ընդհանրապէս վերջին 15 տարուայ աճեցման տոկոսը բոլոր նահանգներում պտտւում է 30-ի շուրջը։ Եթէ արտաքին պայմանները չխանգարեն, արտաքոյ կարգի դէպքեր չպատահեն, այս հաշւով Անդրկովկասի ազգաբնակութիւնը մօտաւորապէս 50-60 տարուայ ընթացքում կարող է կրկնապատկուել։ Այնպէս որ ազգաբնակութեան աճեցումը պէտք է համարել յառաջադիմող, նորմալ։

Անդրկովկասում սեռերի թւական յարաբերութիւնը 26 տարուայ մէջ հետևեալ փոփոխութիւնն է կրել։

| Թիւ | ազգաբնակութ. | արական | % | իգական | % |
|---|---|---|---|---|---|
| 1886 | 4881343 | 2642875 | 54 % | 2238468 | 46 % |
| 1897 | 5516139 | 2979702 | 54, 10 % | 2539437 | 45, 90 % |
| 1912 | 7323025 | 3920253 | 53, 55 % | 3402777 | 46, 45 % |

Ինչպէս այս համեմատութիւնից երևում է տղամարդիկ կանանցից աւել են մի քանի տոկոսով (3-4 %), բայց ըստ երևոյթին տղամարդկանց աճեցման տոկոսը հետզհետէ իջնել է սկսում։ Քաղաքներում այդ նուազումը նկատելի չէ (տղամարդիկ 55, 55 % իսկ կանայք 44, 45 %)։ Այս սկզբից բաւական տարօրինակ է թւում, որովհետև դիտուած է, որ քաղաքակրթուած վայրերում կանայք աւել են տղամարդկանցից։ Անդրկովկասում այս հակառակութիւնը բացատրւում է նրանով, որ քաղաքներում կան շատ բանւորներ կամ այլ բնակիչներ, որոնց կա-

նայք հետները չեն, կամ որոնք Ռուսաստանից են գալիս։

Ծնունդների և մահերի համեմատութիւնը հետևեալն է ցոյց տալիս։

Ծ ն ո ւ ն դ ն ե ր

| Թիւ | արական | % | իգական | % | միասին |
|---|---|---|---|---|---|
| 1898 | 87965 | 54 | 74985 | 46 | 162950 |
| 1911 | 102373 | 53, 27 | 89794 | 46, 73 | 192167 |

Մ ե ռ ն ո ղ ն ե ր

| Թիւ | արական | % | իգական | % | միասին | + |
|---|---|---|---|---|---|---|
| 1898 | 56874 | 54, 5 | 47458 | 45, 5 | 104332 | + 58618 |
| 1911 | 59604 | 54 | 50967 | 46 | 110571 | + 81596 |

Այս աղիւսակից երևում է, որ ազամարդիկ համեմատաբար շատ են ծնւում, բայց և համեմատաբար շատ են մեռնում։ Իսկ սեռերի յարաբերութիւնը ընդհանրապէս նոյնն է, ինչպէս առաջ ցոյց տուինք։ Թէև շատ դժուար կերպով, այնուամենայնիւ նկատելի է որ ազամարդկանց տոկոսն իջնել է սկսում։

Այժմ հետաքրքիր է պարզել Անդրկովկասի չորս գլխաւոր ազգերի աճեցումը։

| | 1897 | 1912 | + | % |
|---|---|---|---|---|
| Ռուսներ | 122257 | 552161 | 429904 | 350 |
| Թաթմելէյին· | 1191999 | 1635533 | 443534 | 37, 28 |
| Հայեր | 939131 | 1636486 | 697355 | 74, 25 |
| Թուրք. տաճիկ· | 1209885 | 2257765 | 1047980 | 41 — |

Աճեցման ամենամեծ տոկոս են ցոյց տալիս ռուսները (350%) և հայերը (74, 25%)։ Այս բնական չէ և պէտք է վերագրել ներգաղթի։ Դժբախտաբար վիճակագրութիւնը ցոյց չէ տալիս գաղթականների թիւը։ Թաթմելէյինների և թուրքերի աճեցումը կարելի է բնական համարել։ Ընդհանրապէս այս դէպքում էլ կարելի է ընդունել, որ այս ազգերը 15 տարուայ ընթացքում աճել են 30-40%։ Հայերի բնական աճեցումը մօտաւորապէս գտնելու համար կարելի է վերցնել Գանձակի և Երևանի նահանգներից երկուական գաւառ և փորձել այդ տեղից հանել։

| Երևանի նահանգ | 1909 թ. | 1912 թ. | + | % |
|---|---|---|---|---|
| Էջմիածնի գաւ. հայեր | 87915 | 101084 | 13160 | 14 |
| Ալէքսանդրապոլի » | 139015 | 193304 | 54289 | 37 |
| Գանձակի նահանգ | | | | |
| Շուշուայ գաւ. հայեր | 75431 | 92192 | 16761 | 22 |
| Ղազախի » » | 49815 | 57781 | 7966 | 16 |
| ընդամենը 4 գաւ. հայեր | 352176 | 444371 | 92176 | 26 |

Երեք տարուայ ընթացքում հայերն այդ չորս գաւառում միջին թւով աւելացել են 26 %․ այնինչ միջին թւով տարեկան մօտաւորապէս 8 %։ Եթէ այդ շատ համարենք, և հայերի աճեցման տարեկան տոկոսը 4 վերցնենք, այն ժամանակ 15 տարուայ ընթացքում հայերի աճեցումը մօտաւորապէս 60 % կըլինի։ Այս էլ գծուար հաւատալի է թւում։ Բայց իրողութիւնն այն է, որ հայերը բաւական մեծ տոկոսով աճում են։

Այս ամենից յետոյ փոքրիկ ուսումնասիրական փորձս բերում է այն եզրակացութեան, որ Անդրկովկասի ազգաբնակութիւնը յառաջադիմում է, նրա աճեցման տոկոսը բաւական բարձր է։ Եւ եթէ պայմանները դէպի վատը չփոխուեն և այսպէս շարունակուի, կարելի է ենթադրել, որ իւրաքանչիւր 50-60 տարին մի անգամ ազգաբնակութիւնը կրկնապատկուել կարող է։ Այս, իհարկէ, չափազանց ուրախալի է․ ուրիշների պէս մենք տեղիք չունենք գանգատուելու ժողովրդի նուազման վրայ։ Ազգաբնակութեան խտութիւնը հետզհետէ ստեղծում է և ապրելու պայմաններ. երկիրը քաղաքակրթապէս բարձրացնում է, բնութեան բարիքներն, ուժերը մեծ չափով են շահագործւում։

Բայց բնութեան օգտագործումը ինքնիրեն լինել չէ կարող։ Ներկայումս, երբ ազգաբնակութիւնը դեռ համեմատօրէն քիչ է, ժողովուրդը գծուարութեամբ է ապրում․ որովհետև չգիտէ կամ հնարաւորութիւն չունի երկրի բարիքներից հարկաւոր չափով օգտուել։ Եւ ահա այստեղ ազգաբնակութեան վաղօրօք օգնութեան պէտք է հասնեն գիտութիւնը, պետութիւնը, համայնական ու անհատական ձեռնարկութիւնները և մանաւանդ դպրոցը։ Սրանք պէտք է հետզհետէ բազմացող ազգաբնակութեան համար ապրելու պայմաններ ստեղծեն, պէտք է բնութիւնն օգտագործելու նոր հնարներ, միջոցներ սովորեցնեն, տան։

Կովկասը բնութիւնից ամեն կողմից առատ օժտուած է, նրա բնական հարստութիւններն անսպառ են։ Եթէ դրանք շահագործուել սկսեն, այն ժամանակ Կովկասին սպասում է մի շատ գրաւիչ ապագայ։ Ազգաբնակութեան արագ աճեցումն ազդանշան է երկրի քաղաքակրթուելուն, յառաջադիմելուն։[1]

**Ա. Մուսայէլեան**

---

1) Յօդուածիս մէջ մի քանի թւերի գումարները սխալ են։ Ես զանազան նկատառումներով իրաւունք չհամարեցի ուղղել այդ և թողեցի այնպէս, ինչպէս բնագրի մէջ է։